5.	ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ PHILOLOGY ФИЛОЛОГИЧЕСКИЕ НАУКИ

ՄԽԻԹԱՐՅԱՆՆԵՐԻ ՀԱՅԵՐԵՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՅԱՆԻ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

ՀՏԴ 81-11
DOI: 10.56246/18294480-2023.15-24

ԱՍՈՅԱՆ ԹԱԹՈՒԼ
Գավառի պետական համալսարանի
բանասիրական ֆակուլտետի դեկան,
բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
էլփոստ՝ asoyan.60@mail.ru

Լրացավ հայ մեծ հայագետ լեզվաբան Էդուարդ Բագրատի Աղայանի ծննդյան 110-ամյակը, որը հսկայական ավանդ ունի հայ լեզվաբանության զարգացման մեջ: Նրա գիտական գործունեությունը, կատարած ուսումնասիրությունները լեզվաբանության տարբեր բնագավառներում նշանավորեցին հայ լեզվաբանության զարգացման նոր աստիճանը: Էդ. Աղայանը մշտապես ինքնատիպ մոտեցում է ցուցաբերել լեզվական-լեզվաբանական երևույթների քննության ընթացքում՝ նորովի մեկնաբանելով բազմաթիվ հնչյունական, բառապաշարային, քերականական իրողություններ, այլ տեսակետից ներկայացնելով լեզվական փաստերը: Լեզվաբանը աչքի է ընկել նաև իր կազմակերպչական ունակություններով: Աշխատելով որպես գիտական գծով պրոռեկտոր, ֆակուլտետի դեկան, ամբիոնի վարիչ, Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի բաժնի վարիչ՝ ցուցաբերել է գիտության, գիտական աշխատանքների կազմակերպչի ակնհայտ հմտություններ: Իր գիտամանկավարժական գործունեության ընթացքում բազում սերունդների է կրթել ու դաստիարակել Էդ. Աղայանը, շատերն են գիտության թեկնածուներ ու դոկտորներ դարձել նրա հմուտ ղեկավարությամբ ու խորհրդատվությամբ: Էդ. Աղայանը իր «Հայ լեզվաբանության պատմություն» աշխատության մեջ մեծ տեղ է հատկացրել Մխիթարյանների լեզվաբանական գործունեությանը: Առանձին-առանձին անդրադարձել է նրանց լեզվաբանական ժառանգությանը և գնահատել դրանք որպես հայագիտության նվաճում:

Էդ.Աղայանը ստեղծեց այնպիսի արժեքներ, որոնք իրավամբ հայ լեզվաբանության պատմության շղթայում նվաճումներ են և երբևէ չեն կորցնի իրենց գիտական նշանակությունը նաև հետագայում:

Բանալի բառեր՝ *լեզվաբանություն, Մխիթարյան միաբանություն, Էդվարդ Աղայան, հնչյունաբանություն, քերականություն, հայ լեզվաբանության պատմություն:*

Էդուարդ Աղայանը Մխիթարյանների և մասնավորապես նրանց լեզվաբանական գործունեության մասին առանձին ուսումնասիրություն չի հրապարակել, սակայն իր «Հայ լեզվաբանության պատմություն» աշխատության մեջ հանգամանորեն անդրադառնում է Մխիթարյաններին՝ ներկայացնելով և գնահատելով նրանց հայերենագիտական աշխատանքները հայերենի զարգացման և հայ լեզվաբանության պատմության տեսակետներից: Այդ աշխատության մեջ ներկայացված հայ հեղինակների գրեթե կեսը Մխիթարյան միաբանության վենետիկյան և վիեննական դպրոցների ներկայացուցիչներ են[1]: Դա պատահական չէ, եթե նկատի ունենանք կիլիկյան հայկական թագավորության կործանումից հետո ստեղծված պատմական իրավիճակը. գաղթեր, մշտական տեղաշարժեր, կրթական ու մշակութային կյանքի կանգ ու խաթարում, այլոց քաղաքական գերիշխանություն և այլն: Այնուամենայնիվ, հայ ժողովրդի վիճակը կարծես թե, 16-17-րդ դարերից սկսած, սկսում է կայունանալ, և արդեն 18-19-րդ դարերում նկատվում է գիտամշակութային կյանքի վերելք, որը մեծ մասամբ պայմանավորված էր հենց Մխիթարյանների գործունեությամբ:

Խոսելով գրքի կառուցվածքի և նյութի ներկայացման սկզբունքների մասին՝ Էդ. Աղայանը նշում է, որ նպատակահարմար է համարել նախ անդրադառնալ հեղինակների ընդհանուր լեզվաբանական հայացքներին, իսկ ընդհանրապես ուշադրության կենտրոնում եղել են հայագիտական-հայերենագիտական ուսումնասիրությունները:

Լեզվաբանը հայ լեզվաբանության պատմությունը բաժանում է շրջանների, իսկ շրջանները ներկայացվում են ըստ լեզվաբանական դպրոցների: Մխիթարյան միաբանության վենետիկյան հատվածի հայագետները (Ղ. Ինճիճյան, Մ. Սեբաստացի, Մ. Չամչյան, Հար. Ավգերյան, Գ. Ավետիքյան, Խ. Սյուրմելյան, Մկ. Ավգերյան) ներկայացված են իբրև առաջին շրջանի հայ լեզվաբանության երկրորդ դպրոցի ներկայացուցիչներ, որոնք հայերենը համարել են նախամայր լեզու: Վիեննայի միաբանության անդամները (Հ. Գաթրճյան, Պ. Հովնանյան, Ա. Այտընյան, Ղ. Հովնանյան, Հ. Տաշյան) ընդ-

[1] Հոդվածում ներկայացվում են «Հայ լեզվաբանության պատմություն» ուսումնասիրության 1-ին հատորի տվյալները:

գրկված են երկրորդ շրջանի 4-րդ դպրոցում, որոնք հայերենը համարել են անկախ հնդեվրոպական լեզու:

Էդ. Աղայանը հայ լեզվաբանության պատմությունն սկսում է 5-րդ դարից: Քննելով մի շարք հարցեր՝ կապված հայերենը բաբելոնյան խառնակությունից առաջացած լեզու լինելու, հայերենի ծագման, բառերի և նրանց նշանակությունների, ստուգաբանությունների, Հովի. Երզնկացու լեզվաբանական դիտարկումների հետ, իրավացիորեն այն եզրակացությանն է հանգում, որ հայ լեզվաբանության այս նախնական վիճակում չենք ունեցել ոչ մի լեզվաբանական աշխատություն, հայերենի ոչ մի, թեկուզև քիչ թե շատ ինքնուրույն ուսումնասիրություն: Եղած լեզվական բնույթի դիտարկումները համարում է «մանկական թոթովանքներ». «Հետևաբար այս նախնական շրջանում մենք չենք ունեցել լեզվաբանություն, որպես գիտություն»,- գրում է լեզվաբանը[2]: Այնուամենայնիվ, դրանք, որքան էլ ոչ գիտական, հող են նախապատարաստում հետագա ուսումնասիրությունների համար:

Չնայած Էդ. Աղայանը հայ լեզվաբանության պատմության ժամանակագրական կոնկրետ բաժանումներ չի կատարում, սակայն շարադրանքից երևում է, որ երկրորդ դպրոցի սկիզբը 18-րդ դարն է՝ Մխիթարյան միաբանության հիմնադրման և գործունեության ծավալման առաջին դարը: Պետք է ասել, որ այս շրջանում հայոց կյանքը սոցիալ-տնտեսական առումով բավականին կարգավորվել էր, հայերն այլ երկրների հասարակական հարաբերություններում արդեն ունեին իրենց կայուն տեղն ու դիրքը, գործունեության ոլորտները, ստեղծում էին մշակութային կենտրոններ, բացում էին վարժարաններ, կազմակերպում էին կրթական գործընթացը: Սակայն չնայած կայունացող իրավիճակին՝ տեղի էր ունենում խիստ վտանգավոր ու խորքային մի գործընթաց, որը տանում էր հայոց ուծացմանը այլ ժողովուրդների մեջ: Պետականություն չունենալու հանգամանքը ստիպում էր այլ ուղիներ փնտրել ազգային ինքնությունը օտար միջավայրում պահպանելու համար: Ահա համազգային այս խնդրի լուծմանն էին նպատակաուղղված վերը նշված կենտրոնների ստեղծումը, կրթական հաստատությունների բացումը և այլն: Նշենք, որ ազգային դիմագծի կորստի շուրջ մտահոգությունները հաճախակի են ներկայացվել պարբերական մամուլում, առաջարկվել են իրավիճակի

[2] Այս մասին մանրամասն տե՛ս Էդ. Աղայան, «Հայ լեզվաբանության պատմություն», հտ. 1, էջ 94-95:

շտկման միջոցներ[3]: Առանց չափազանցության կարող ենք ասել, որ այս հարցերում Մխիթարյանները եղան մշակութային այն գործիչները, որոնք համակարգված ու համակողմանի գործունեություն ծավալեցին հայագիտության ոլորտում, որոնց լեզվաբանական ուսումնասիրությունները դարձան հայ լեզվաբանական մտքի նվաճումներ՝ պայմանավորելով նաև հայ լեզվաբանության պատմության բնույթն ու ընթացքը:

Էդ. Աղայանը հայ լեզվաբանության պատմության շրջանաբաժանում կատարելիս վենետիկցիներին ներկայացնում է առաջին շրջանում, իսկ վիեննացիներին՝ երկրորդ: Դա, իհարկե, պատահական չէ և պայմանավորված է հայոց լեզվի ծագման վերաբերյալ նրանց ունեցած պատկերացումներով: Վենետիկյան դպրոցը պաշտպանել է հայերենի նախամայր լեզու լինելու գաղափարը, իսկ վիեննականը՝ անկախ հնդեվրոպական լեզու լինելու տեսակետը: Տեսակետների տարբերությունը կարելի է բացատրել մի քանի հանգամանքներով. ա/ վենետիկցիների այդ ներկայացուցիչները ապրել ու գործել են 18-19-րդ դարի 1-ին կեսին, իսկ վիեննացիները՝ 19-րդ դարի 2-րդ կեսին, բ/վենետիկցիների պարագայում պատմահամեմատական լեզվաբանությունը նոր էր առաջին քայլերն անում, իսկ վիեննացիների դեպքում այն արդեն բավական զարգացում էր ապրել, գ/ վիեննացիները սերտ առնչություններ ունեին եվրոպական առաջադեմ լեզվաբանական միջավայրի հետ: Աշխատության կառուցվածքը, լեզվաբանական դպրոցների սեղմ նկարագրությունները անուղղակիորեն հաստատում են ասվածը:

Էդ.Աղայանը լեզվաբանական դպրոցները, առանձին լեզվաբանների ուսումնասիրությունները ներկայացնելիս, իբրև սկզբունք, իր հիմնական խնդիրն է համարում նախ ցույց տալ հայերենի ծագման և ցեղակցության, ապա ընդհանուր լեզվաբանական և տեսական ըմբռնումների հետ կապված հարցերը, այնուհետև լեզվական հարցերը քննել, թե «հայերենի ուսումնասիրության մեջ տվյալ հեղինակն ընդհանուր լեզվաբանական՝ իր հետևած դպրոցի այս կամ այն դրույթն արտահայտե՞լ է, թե՞ ոչ, և եթե արտահայտել է, ի՞նչ հարցի նկատմամբ և ինչպե՞ս»[4]:

Մինչև Մխիթարյանների հանդես գալը արդեն կատարվել էին որոշ ուսումնասիրություններ, սակայն հայերենի ուսումնասիրությունը այս շրջա-

---

[3] Տե՛ս, օրինակ, Թ. Ասոյան, Լեզվի հարցերը Վիեննայի Մխիթարյանների «Եւրոպա» պարբերականում, ԳՊՀ գիտական հոդվածների ժողովածու, 14, 2023:

[4] Էդ. Աղայան, նշված աշխ., էջ 163-164:

նում նաև այլ նշանակություն էր ձեռք բերել. «...այս շրջանում հայերեն լեզվի ուսումնասիրությունը բացի յուր ուսուցողական նպատակից ունի նաև մի երկրորդ՝ թերևս առաջնից ավելի զորեղ նպատակ. նա հետապնդում է պետական-քաղաքական հայտնի մի ձգտում՝ պաշտպանել հայության և հայ պետականության գոյությունը. հայոց լեզվի ուսումնասիրությունը, հատկապես նրա ծագման հարցին նվիրված քննություններն ի սպաս են դրվում այս նպատակին»[5],- գրում է լեզվաբանը: Իհարկե, պետականության գոյության պաշտպանության խնդիր տվյալ ժամանակաշրջանում լինել չէր կարող, որովհետև հայոց պետականությունը արդեն 14-րդ դարավերջից վերացել էր, իսկ ինչպես վերևում նշեցինք, ազգային նկարագիրը պահպանելու խնդիր կար, որը հիմնականում կապում էին հայոց լեզվի ուսուցման, ուսումնասիրության, մաքրման ու զարգացման, դասագրքերի, քերականությունների ու բառարանների կազմության և հրատարակման հետ:

Հայ լեզվաբանության պատմության 1-ին շրջանի երկրորդ դպրոցը, որի ներկայացուցիչներն էին նաև Մխիթարյան հայրերը, Աղայանը համարում է անցման շրջան նախնական վիճակի և գիտական լեզվաբանության միջև՝ նշելով այդ դպրոցի որոշ առանձնահատկություններ: Նա կարևորում է երկու հանգամանք. ա) նախորդ շրջանում՝ հազար տարուց ավելի մի ժամանակահատված, հայերենով զբաղվել են միայն հայերը, իսկ 17-18-րդ դարերից սկսած՝ հայերենագիտությամբ զբաղվում է նաև եվրոպական լեզվաբանական միտքը, բ) նախորդ շրջանում հայ լեզվաբանական միտքը գտնվում էր հունարենի ուժեղ ազդեցության տակ, հայ քերականները հայերենը ըստ էության հարմարեցնում էին հունարենի քերականական օրենքներին և լեզվում ներմուծում էին բազմաթիվ արհեստական, հայերենին խորթ լեզվական ձևեր, մինչդեռ 18-րդ դարում արդեն երևան են գալիս լուրջ գիտական, հայերենը հայերենով ներկայացնող ուսումնասիրություններ: Ազդեցության առումով հունարենին փոխարինում է լատիներենը, «բայց դա, այնուամենայնիվ, չի խանգարում հայերենի՝ իբրև ուրույն լեզվի ուսումնասիրությանը՝ իր առանձնահատկություններով հանդերձ»[6]: Իհարկե, եղել են լատինաբան հայերենի արտահայտություններ, սակայն դրանք մեծ ազդեցություն և տարածվածություն չեն ունեցել: Նշենք, որ լատինաբանություններից հայերենը մաքրելու գործում մեծ դեր են խաղացել հենց Մխիթարյանները:

---

[5] Էդ. Աղայան, նշված աշխ., էջ 94-95:
[6] Էդ. Աղայան, նշված աշխ., էջ 96:

Ինչպես նշվեց, Մխիթարյանների վենետիկյան հայրերին Էդ.Աղայանը, հիմք ընդունելով հայերենի ծագման վերաբերյալ նրանց ունեցած նույն տեսակետը, համարում է երկրորդ դպրոցի ներկայացուցիչներ: Այս դպրոցի ներկայացուցիչները հայերենը համարում են մարդկության նախալեզուն՝ ի տարբերություն նախորդների, որոնք նախալեզուն համարում էին եբրայերենը: Այս տեսակետը վերապահությամբ գիտական շրջանառության մեջ է դնում գերմանացի հայագետ Շրյոդերն իր «Արամեան լեզուի գանձ» աշխատության մեջ (գերմ.՝ Schröder, ընդունված է նաև Սկրոդեր գրությունը): Այս տեսակետն է որդեգրում Մ. Սեբաստացին, նրան հետևում են Մ. Չամչյանը, Ղ. Ինճիճյանը: Ըստ Աղայանի՝ այս տեսությունը վերջնականապես ամբողջական տեսքի է բերվում Ղ.Ինճիճյանի կողմից, որը ներկայացված է նրա՝ հետմահու լույս տեսած «Հնախօսութիւն աշխարհագրական Հայաստանեայց աշխարհի» գրքում: Ներկայացնելով Ղ. Ինճիճյանի փաստարկները, մասնավորապես ստուգաբանությունները, որոնցից շատերը իսկապես գիտական արժեք չունեին, Աղայանը եզրակացնում է, որ դրանք (ստուգաբանությունները) համակարգային բնույթ են ստանում և «իրենց լրջությամբ լեզվաբանական հմուտ քննությունների արժեք են ստանում»[7] :

Էդ. Աղայանը բարձր է գնահատում Մ. Սեբաստացու և նրա հիմնած միաբանության հայերենագիտական գործունեությունը, նրա նվիրվածությունը հայ ժողովրդի մշակույթի զարգացման, նրա լուսավորության գործին, «որի շնորհիվ էլ այդ միաբանությունը դարձավ հայագիտության մի իսկական կաճառ, այլև Աբբահայրը յուր գրչով մեծապես օժանդակեց հայոց լեզվի ուսումնասիրման գործին՝ իր քերականություններով և բառարանով»[8]: Հայտնի է, որ աշխարհաբարի (արևմտահայ տարբերակի) առաջին քերականությունը պատկանում է Սեբաստացու գրչին («Դուռն քերականութեան աշխարհաբառ լեզուին հայոց», Վենետիկ, 1727), որը ուսուցողական նպատակ հետապնդող և արևմտահայությանն ուղղված գրքույկ էր[9]: Եթե հայատառ թուրքերենով գրված այս քերականության նպատակը արևմտահայությանը հայերեն սովորեցնելն էր, ապա գրաբարի քերականությունը («Քերականութիւն գրաբարի լեզուի հայկազան սեռի», Վենետիկ, 1730) դնում էր մի կարևոր գործընթացի սկիզբ. պետք էր գրաբարը մաքրել լատինաբանությունն-

[7] Էդ. Աղայան, նշված աշխ., էջ 104:
[8] Էդ. Աղայան, նշված աշխ., էջ 120:
[9] Այս գրքույկի մասին մանրամասն տե՛ս Թ. Ասոյան, Վենետիկի Մխիթարյանները և աշխարհաբարի հարցերը, Երևան, 2001:

ից, այն ձերբազատել լատիներենի ազդեցությունից: Էդ. Աղայանը աշխարհաբաի քերականությունը արժևորում է թե՛ պատմական, թե՛ հայոց լեզվի պատմության տեսակետից: Ինչ վերաբերում է գրաբարի քերականությանը, ապա Էդ. Աղայանը ևս, վկայակոչելով Մ. Չամչյանի դիտարկումները, փաստում է Սեբաստացու նպատակը, այն է՝ գրաբարի քերականությունը ներկայացնել միայն իրեն բնորոշ ձևերով: Սակայն դա նա լիովին չի իրականացրել: Այդ առումով բերելով Չամչյանի տեսակետը, թե պատճառը հրապարակի վրա եղած լատինաբան քերականությունների առկայությունն էր, որ հովանավորվում էր Հռոմի կողմից, ուստի Սեբաստացին, լինելով կաթոլիկ եկեղեցու հետևորդ, չէր կարող իր դեմ հանել դրանց հեղինակներին, Էդ. Աղայանը հավելում է մեկ պատճառ ևս. օտար ձևերի առկայությունը ոչ միայն իր դեմ չտրամադրելու համար լատինաբան քերականությունների ազդեցության հետևանք էր, այլև գրաբարի հարազատ ձևերը չտարբերակելու հետևանք. «Որ Մխիթար Աբբայի գրքում նկատվում է ժամանակի քերականությունների ազդեցությունը, դա ճիշտ է, և այդպես էլ անշուշտ պետք է լիներ, սակայն ընտիր և ոչ ընտիր, հարազատ և ոչ հարազատ գրաբարյան ձևերը չտարբերելու համար ոչ միայն այդ ազդեցությունը պետք է նշել, այլև այն, որ իր ժամանակ այդ ձևերի հարազատությունը դեռ հնարավոր էլ չէր պարզել»[10],-գրում է նա: Լեզվաբանը, նշված հանգամանքները պայմանավորելով նաև գրաբարի անբավարար ուսումնասիրությամբ, այնուամենայնիվ այդ քերականությունը համարում է գրաբարի ուսումնասիրության մի նոր, ավելի բարձր աստիճան, որի արտահայտություն կարելի է համարել այն, որ այդ քերականությունն է դարձել վրացերենի քերականության հիմքը:

Էդ. Աղայանը շատ է կարևորում նաև Սեբաստացու կազմած բառարանը՝ այն համարելով իսկական գլուխգործոց իր ժամանակի մեջ:

Հանգամանորեն քննելով Սեբաստացու հայագիտական ժառանգությունը՝ Աղայանը հանգում է այն եզրակացության, որ նա «իրեն նախորդող ամբողջ շրջանի գագաթն է հանդիսանում, իր քերականություններով ու հատկապես բառարանով նա մի կողմից փակում է հին շրջանը .... և մյուս կողմից բացում մի նոր շրջան՝ գիտական լեզվաբանության երախայրիքի շրջանը»[11]:

---

[10] Էդ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, Երևան, 1958, էջ 124:
[11] Նույն տեղում, էջ 131:

Էդ. Աղայանը հայ գիտական պատմագրության հիմնադիր Մ. Չամչյանին համարում է հայերենի՝ մարդկության առաջին լեզուն լինելու գաղափարի տեսաբաններից մեկը, որը փորձում է տեսականորեն ապացուցել այդ տեսակետը: Չամչյանն իր պատկերացումները հայերենի նախալեզու լինելու վերաբերյալ արտահայտել է իր «Պատմութիւն հայոց» եռահատոր գրքում: Աղայանը առավել կարևորում է գրաբարի քերականությունը՝ «Քերականութիւն Հայկազեան լեզուի» (Վենետիկ, 1779), որն ըստ անհրաժեշտության կառուցվածքաբովանդակային փոփոխություններով մի քանի հրատարակություններ է ունեցել և օգտագործվել որպես դասագիրք հայոց երկու հատվածների համար: Սեղմ ներկայացնելով Չամչյանի գնահատականները Սեբաստացու քերականության վերաբերյալ, նրա պատկերացումները հայերենի քերականական կառուցվածքի մասին՝ Աղայանը գրում է, որ «նա վերջնական և ուժգին հարված հասցրեց լատինաբանությանը յուր քերականությամբ՝ իբրև տեսական հերքումն ու բացառումը նրա»[12]:

Ընդհանրապես Էդ.Աղայանը այս և մյուս հայագետների աշխատանքները գնահատելիս երկակի մոտեցում է ցուցաբերում. նախ՝ հաշվի է առնում դրանց նշանակությունը իրենց ժամանակի մեջ և ապա՝ հայ լեզվաբանական մտքի շղթայում հայերենի ուսումնասիրության մեջ խաղացած դերը: Եթե իրենց հրատարակման պահին այդ քերականությունները, բառարանները հայերենագիտության մեջ կարելի է նվաճում համարել, ապա պատմականորեն դրանք հնանում են լեզվաբանության զարգացմանը զուգընթաց: Այդպես են գնահատվում Հ. Ավգերյանի՝ հայերենի անգլերեն քերականությունը և մի քանի երկլեզվյան բառարանները: Աղայանն ասում է, որ դրանք, այնուամենայնիվ, գիտական կարևոր նշանակություն չունեն, չնայած գործնականում մեծ նշանակություն են ունեցել ֆրանսերենի և անգլերենի ուսուցման գործընթացում: Հակառակ սրանց՝ բարձր է գնահատվում Հ.Ավգերյանի մի աշխատությունը՝ նվիրված չափի և կշռի միավորներ նշանակող բառերի քննությանն ու բացատրությանը («Բացատրութիւն չափից և կշռոց նախնեաց, առաջնորդութեամբ Եպիփանու,Խորենացւոյ, Շիրակացւոյ», Վենետիկ, 1821): Լեզվաբանը կարծում է, որ մինչև օրս այն չի կորցրել իր նշանակությունը:

Էդ. Աղայանը նկատում է, որ վենետիկցիները 18-19-րդ դարերում ստեղծում էին գրաբարի քերականություններ, կազմում էին բառարաններ, ընդ

[12] Նույն տեղում, էջ 135:

որում առավել արժեքավոր էր համարում բառարանները: Այս տեսակետից առանձնացնում է Նոր հայկազյան բառարանը՝ «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (Վենետիկ, 1836-37), որը համարում է «իբրև մի անգերազանց գործ, պահպանում է և միշտ պիտի պահպանի յուր արժեքը»: Խոսելով բառարանի մասին՝ Աղայանը նշում է նրա հետևյալ առանձնահատկությունները. ա) դրա մեջ իրենց արտացոլում են գտել այդ ժամանակ հայտնի բոլոր մատենագրական երկերում գործածված բոլոր բառերը՝ չնչին բացառություններով, որոնք հետագայում ներառվեցին «Առձեռն բառարանում», բ) տրվում են բառերի բոլոր հնարավոր իմաստները, ընդ որում հայերենին զուգահեռ նաև հունարեն, պարսկերեն, լատիներեն, թուրքերեն, արաբերեն բացատրությունները, գ)տրվում են բառերի ստուգաբանությունները, դրա շնորհիվ այն դառնում է նաև ստուգաբանական բառարան: Կարևոր է նաև այն, որ բառերն ստուգաբանելիս հեղինակներն օգտագործում են համեմատական մեթոդը: Ճիշտ է, քիչ չեն սխալ ստուգաբանությունները, սակայն դրանք կարելի է արդարացնել լեզվաբանության զարգացման այդ շրջանի մակարդակով:

Այսպիսով, Աղայանը «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» բառարանը համարում է հայ բառարանագրության գագաթ, որն ամփոփում է նախորդ շրջանում հայ լեզվաբանության ձեռքբերումները և դառնում նոր սկիզբ՝ նախանշելով հայ լեզվաբանության զարգացման հաջորդ աստիճանը:

19-րդ դարի 30-ական թվականներին լեզվի ուսումնասիրությունները նոր հուն են մտնում: Համեմատաբանությունը լեզուների ուսումնասիրության ոլորտում նորանոր փաստեր էր ի հայտ բերում, որոնք հնարավորություն էին տալիս լեզվաբաններին գիտականորեն քննել լեզվի ծագման հարցերը, կատարել դասակարգումներ, բացահայտել ցեղակցական-ծագումնաբանական ընդհանրությունները, գաղափար տալ նախալեզվի, լեզվաընտանիքների մասին: Այս շրջանում է սկզբնավորվում նաև հայերենի համեմատական ուսումնասիրությունը: Էդ.Աղայանը այս շրջանում ևս հայ լեզվաբանության հարցերը քննում է հայերենի ծագման վերաբերյալ պատկերացումների տեսանկյունից: Հայ լեզվաբանության երրորդ դպրոցը հայերենը դիտարկում է որպես արիական-իրանյան լեզու: Պետերմանը, Վինդիշմանը, Լագարդը, Մյուլլերը և այլք տարբեր ձևերով հայերենը համարում էին իրանյան բարբառներից մեկը: Այս տեսակետի կրողներ Մխիթարյաններից ներկայացուցիչներ չեն նշվում:

19-րդ դարի 70-ական թվականներին Հ. Հյուբշմանի ուսումնասիրություններով ապացուցվեց հայերենի՝ անկախ հնդեվրոպական լեզու լինելու

տեսակետը, որի հետևորդներ կային Վիեննայի Մխիթարյան միաբանության մեջ: Ըստ Էդ. Աղայանի՝ Վիեննայի Մխիթարյաններին այնքան էլ չեն հետաքրքրել հայերենի ցեղակցության, ծագումնաբանության հարցերը: Նրանք սկզբում հետևել են հայերենի իրանյան լեզու լինելու տեսակետին, իսկ Հյուբշմանի հայտնի աշխատության («Հայերենի դիրքը հնդեվրոպական լեզուների շրջանում», 1875) լույս տեսնելուց հետո ընդունեցին հայերենի հնդեվրոպական լեզու լինելու փաստը: Նրանք նախընտրել են զբաղվել հայերենի, նրա տարբեր դրսևորումների և շրջանների ուսումնասիրությամբ: Նրանք զբաղվել են և՛ գրաբարի, և՛ աշխարհաբարի մաքրման, կանոնարկման հարցերով: Աղայանը նկատում է վիեննականների հայերենագիտական գործունեության մեկ այլ առանձնահատկություն. պետք է հաշտեցնեին կրոնական պատկերացումները գիտական նվաճումների հետ: Մի կողմից ընդունում են լեզուների ցեղակցության, նախալեզուների գոյության տեսակետները, մյուս կողմից՝ մարդկային լեզուն համարում են աստվածային պարգև:

Վիեննայի Մխիթարյանների կարևորագույն նվաճումը դասական գրաբարի վերականգնումն է: Դրա առաջնության պատիվը Աղայանը վերագրում է Հովսեփ Գաթըրճյանին, որին հակադարձեցին վենետիկցիները: Խորաքնին ուսումնասիրությամբ Գաթըրճյանը վերականգնեց 5-րդ դարի առաջին կեսի դասական գրաբարը, միաժամանակ ցույց տվեց հետագա փոփոխությունները՝ որպես լեզվի զարգացման արդյունք, և հունարենի ազդեցության հետևանքները գրաբարի վրա: Հայերենի վերաբերյալ նրա հայացքները կապվում են հնդեվրոպաբանության նվաճումների հետ: Նա էլ, հետևելով ժամանակի իշխող տեսակետին, հայերենը համարում է հնդեվրոպական լեզու, ընդ որում տեղադրում է հնդիրանյան ճյուղում և համարում զենդերենի, պահլավերենի, հին պարսկերենի քույր լեզու[13]: Աղայանը ավելացնում է նաև, որ այս տեսակետն արտահայտելիս դեռևս լույս չէին տեսել Պետերմանի և Մյուլլերի ուսումնասիրությունները: «Գաթըրճյանը առաջիններից մեկն էր, որ եվրոպական հայագետների հետ միասին առաջ է մղել հայերենի ուսումնասիրությունը՝ համեմատական մեթոդով...»[14],- գրում է Աղայանը, սակայն Գաթըրճյանին բարձր է գնահատում այլ առումով. «Սակայն Գաթըրճյանի վաստակը դրանով գնահատել չի կարելի: Դրա հետ միասին և, նույնիսկ դրանից ավելի մեծ նծանակություն ունի հայերենի ուսումնասիրության հա-

[13] Մանրամասն տե՛ս Հ. Գաթըրճյան, Պատմութիւն տիեզերական, հտ. Ա, Վիեննա, 1849:
[14] Էդ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հտ. 1, Երևան, 1958, էջ 256

մար դասական հայերենի գյուտը. Գաթըրճյանը **դասական հայերենի գտիչն է**[15] և իբրև այդպիսին՝ Վիեննական դպրոցի հիմնադիրը»[16]:

Էդ.Աղայանն իրավացի է, երբ ասում է, որ Մխիթարյանները, ուշադրության կենտրոնում պահելով հայերենի ուսումնասիրության խնդիրները, ընդհանուրլեզվաբանական տեսական խնդիրներին համարյա չեն անդրադառնում, սակայն տեսական հարցերի արծարծման տեսակետից առանձնացնում է Պողոս Հովնանյանին՝ իբրև նշանավոր հեղինակի: Վերջինս իր տեսական հայացքները ներկայացրել է «Մարդկային լեզուին սկզբան, հանգամանաց, միութեան ու բաժանման և ազգային լեզուաց վրայ քննական տեսութիւն մը» աշխատության մեջ: Այստեղ հեղինակը ընդհանուր լեզվաբանական հայեցակետով քննում է նախամայր լեզվի, նրանից առաջացած լեզուների, ազգային լեզուների առաջացման և զարգացման հարցերը: Հավնանյանի դեպքում ևս Աղայանը կարևորում է նրա՝ մի կողմից կրոնավոր, մյուս կողմից՝ գիտնական լինելու հակադիր հանգամանքները: Այնուամենայնիվ, լեզվի հասարակական բնույթի, հաղորդակցման և մտածողության միջոցներ լինելու, պատմական երևույթ լինելու վերաբերյալ նրա դատողությունները բավականին արդիական են: Լեզուների ցեղակցության, պատմական զարգացման հարցերում կանգնած լինելով գիտական հիմքի վրա՝ այնուամենայնիվ նա լեզուների հայտնի տիպաբանական առանձնահատկությունները բնորոշում է որպես զարգացման աստիճաններ՝ անջատական լեզուները ներկայացնում են լեզուների զարգացման ցածր աստիճանը, կցական լեզուները՝ երկրորդ աստիճանը, իսկ թեքական լեզուները նշում են զարգացման բարձր աստիճանը: Լեզուների ձևաբանական կառուցվածքի յուրահատկությունները համարելով աստիճանական զարգացման հետևանք՝ Հովնանյանը, ինչպես Աղայանն է նշում, ճիշտ է լուծում քերականական մասնիկների առաջացման, լեզուների փոխազդեցությունների, անհրաժեշտ փոխառությունների հետ կապված հարցերը: Ի վերջո, ցույց տալով Պ. Հովնանյանի լեզվական հայացքների դրական ու բացասական կողմերը՝ Էդ.Աղայանը բարձր է գնահատել նրա կատարած ուսումնասիրությունները տեսական լեզվաբանության ոլորտում. «Հ.Պ.Հովնանյանը առաջին հայ լեզվաբան փիլիսոփան է. նա է, որ հայ իրականության մեջ առաջին անգամ լուրջ ու գիտական կերպով ուսումնասիրել է լեզվի ծագման և զարգացման

---

[15] Մենևիշյանի բնորոշումն է: Ընդգծումը Էդ. Աղայանինն է:

[16] Էդ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հտ. 1, Երևան, 1958, էջ 256

ընդհանուր տեսական, փիլիսոփայական հարցերը: Հայ իրականության մեջ նա լեզվի փիլիսոփայության հիմնադիրն է...»[17], - եզրակացնում է նա:

Ավելի բարձր կարծիք Էդ. Աղայանն ունի Արսեն Այտընյանի նկատմամբ: Վերջինիս նա համարում է վիեննական դպրոցի պարծանքը, իսկ նրա «Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի» աշխատությունը՝ հայագիտության կոթող: Այս աշխատությամբ հիմք է դրվում հայերենի, մասնավորապես արևմտահայերենի գիտական ուսումնասիրությանը: Գրքի առաջին մասում, որ կոչվում է «Նախաշաւիղ», հեղինակը քննական հայացքով ներկայացնում աշխարհաբարի ձևավորման և զարգացման պատմական ընթացքը՝ դա կապելով մարդկային լեզվի զարգացման ընթացքի հետ: Ա. Այտընյանը ճիշտ է մեկնաբանում գրաբարի և աշխարհաբարի փոխհարաբերությունները 19-րդ դարի 2-րդ կեսին, ժամանակի ընթացքում լեզվի կրած փոփոխությունները, հասարակական, տարածական տարբերակները և այլն: Գրքի երկրորդ մասը արևմտահայերենի գիտական քերականությունն է, որտեղ ներկայացվում են ոչ միայն գործող օրինաչափությունները, այլև հոլովման, խոնարհման ձևերի, վերջավորությունների, ածանցների ծագումն ու զարգացումը: Փաստորեն արևմտահայերենի քերականությունը ստանում է ոչ թե նկարագրական, այլ պատմական բնույթ: Մյուս կողմից էլ եթե «Նախաշաւիղ»-ը աշխարհաբարի տեսական շարադրանքն է, ապա քերականությունը դրա գործնական արտահայտությունն է պատմականորեն: Հանգամանորեն ներկայացնելով Այտընյանի աշխատությունը՝ Աղայանն այն կարծիքն է արտահայտում, որ նա «բարձր է կանգնած իր ժամանակի ոչ միայն բոլոր հայ լեզվաբաններից, այլև շատ եվրոպական գիտուններից»՝ նույնիսկ շատ հարցերում առաջ ընկնելով նրանցից: Այս աշխատությունը «անզուգական կոթող» համարելով՝ Աղայանն ասում է, որ «նրա մեջ հեղինակի արտահայտած դրույթները թե՛ առհասարակ մարդկային լեզվի, և թե՛ առանձնապես աշխարհաբարի պատմության նկատմամբ այնքան առաջադիմական, այնչափ գիտական և ուղիղ են, որ հեղինակին մի ամբողջ գլխով բարձրացնում են իր ժամանակից»[18]:

Դասական գրաբարի ուսումնասիրության ոլորտում Հ.Գաթըրճյանին ընկերակցում էր Ղ. Հովնանյանը: Վերջինս փորձել է կազմել դասական գրաբարի քերականությունը, որը Գաթըրճյանը բնորոշել է որպես «ճոխ գրո-

[17] Նույն տեղում, էջ 269:
[18] Նույն տեղում, էջ 284:

ւած, բազմաջան աշխատութեան պտուղ»[19], սակայն դեռ չավարտած՝ շուրջ 10 տարի աշխատում է «Ռամկօրէնի(աշխարհաբարի - Թ.Ա.) քերականութիւն» աշխատության վրա, որը մասամբ է հրատարակվում: Աղայանը ներկայացնում և վերլուծում է Ա մասի 48 էջանոց «Նախաշաւիղ»-ը: Այստեղ Հովնանյանը քննության է առնում հայ մատենագրության լեզվի զարգացման աստիճանները, գրաբարը և բարբառների գոյության հարցը 5-րդ դարում: Աղայանը Հովնանյանի արտահայտած գաղափարները, փաստարկված դրույթները ընդհանուր առմամբ համարում է ճիշտ, որոնք միաժամանակ պարզաբանում են աշխարհաբարի նախնական շրջանի լեզվական առանձնահատկությունները:

Հայերենագիտության զարգացման ընթացքի հետ կապված՝ Էդ. Աղայանն ուշադրություն է դարձնում բավականին տեսանելի մի հանգամանքի վրա: Բանն այն է, որ հայերենի, մասնավորապես համեմատական հայերենագիտությունը մեծ թափով զարգանում էր Եվրոպայում եվրոպացի լեզվաբանների կողմից (Հյուբշման, Պետերման, Վինդիշման, Լագարդ, Գոշե և այլք) եվրոպական լեզվաբանության նոր ձեռքբերումների կիրառմամբ: Քննարկվում էին նայերենի ծագման, զարգացման, կառուցվածքի, ցեղակցության, ինդեվրոպական լեզվաընտանիքում գրաված դիրքի հետ կապված և բազմաթիվ այլ հարցեր: Հայ հայարագետ-լեզվաբանները յուրացնում էին եվրոպական լեզվաբանության նվաճումները և ըստ անհրաժեշտության կիրառում հայերենի ուսումնասիրության ընթացքում: Այդ առումով Էդ. Աղայանը Վիեննայի Մխիթարյաններից առանձնացնում է Ա. Այտընյանին, Ղ. Հովնանյանին և Ս. Տերվիշյանին: Վերջինս, տիրապետելով մի շարք դասական և եվրոպական լեզուների, զբաղվել է ոչ միայն լեզվաբանական ուսումնասիրություններով, այլև կատարել է թարգմանություններ:

Ս.Տերվիշյանի առաջին հայագիտական աշխատանքը (Armeniaca, գիրք առաջին, Das altarmenische Ք, 1877), որը գրված էր եվրոպական լեզվաբանության մեջ ընդունված նոր սկզբունքների կիրառմամբ, ենթարկվեց քննադատության (Հ. Հյուբշման): Այդ աշխատանքում «հեղինակը քննության է առնում ք ունեցող բոլոր հայերեն բառերը, տալիս նրանց ստուգաբանությունները, ինչպես և այն բոլոր փոփոխությունները, որոնց ենթարկվել է հայերեն ք հնչյունը»[20]: Աղայանը նշում է այն թերությունները՝ կապված ք

[19] Յուշարձան, էջ 32:
[20] Էդ. Աղայան, Հայ լեզվաբանության պատմություն, հտ. 1, Երևան, 1958, էջ 296:

ինչյունի ծագման հետ, որի պատճառով կատարվել են սխալ համեմատություններ, որոնց պատճառով աշխատանքը ենթարկվում է քննադատության: Աղայանը հատուկ ուշադրության արժանի և գլուխգործոց է համարում Ս. Տերվիշյանի «Հնդեվրոպական նախալեզու» գործը, որտեղ հակիրճ ու մատչելի ներկայացվում է հնդեվրոպական լեզվաբանությունը՝ արտահայտելով նաև իր ընդհանուրլեզվաբանական հայացքները: Քննվում են լեզուների ծագման ու ցեղակցության, հնդեվրոպական նախալեզվի, հնդեվրոպացիների քաղաքակրթության հետ կապված հարցեր: Աղայանը կարևորում է նաև նրա կողմից 1887թ. հրատարակված և ընդամենը մեկ տարվա կյանք ունեցած «Լեզու» լեզվաբանական հանդեսը, որն առաջինն էր հայ իրականության մեջ:

Քննելով Ս. Տերվիշյանի հայացքներն ընդհանուր լեզվաբանության հարցերի վերաբերյալ՝ Աղայանը ներկայացնում է նաև հայերենի նկատմամբ ունեցած պատկերացումները, որոնք գնահատվում են որպես մեծ մասամբ նախորդ դպրոցի(հայերենը իրանյան լեզու) ազդեցության արդյունք:

Էդ.Աղայանը, գնահատելով Ս. Տերվիշյանի հայագիտական-լեզվաբանական գործունեությունը, ասում է, որ նա այն առաջին լեզվաբաններից էր, որոնք ուշադիր հետևում էին եվրոպական լեզվաբանության զարգացմանը և աշխատում էին այդ բնագավառում եղած նոր տեսություններն ու սկզբունքները գործադրել հայերենի ուսումնասիրության ընթացքում:

Մխիթարյան բազմարդյուն հայրերից է Հակովբոս Տաշյանը, որի բազմաթիվ աշխատություններից է Էդ. Աղայանը առանձնացնում է «Ուսումն դասական Հայերէն լեզուի» աշխատությունը, որը իրականացրել է Քերովբե Սպենյանը, սակայն մնացել է անտիպ: Հ. Տաշյանը հիմնովին վերամշակել է այդ աշխատությունը՝ ավելացնելով ժամանակի ընթացքում լեզվաբանության նոր նվաճումները, արտահայտված նոր կարծիքները և հրատարակելով այն: Աղայանը համարում է, որ Տաշյանն «իր անասելի աշխատասիրությամբ և գիտնականի մեծագույն հմտությամբ» այն դարձրել է մեծարժեք գործ: Այնուամենայնիվ, այս աշխատանքն էլ մասամբ է հրատարակվել: Մյուս հանգամանքն էլ այն է, որ աշխատությունը գրված է դասական գրաբարով:

Աշխատության բնույթին համապատասխան՝ Էդ. Աղայանը այսպես ներկայացնում և գնահատում է Մխիթարյան հայրերի աշխատությունները և կատարում է մի դիտարկում. ներկայացված հեղինակները նեղ իմաստով լեզվաբաններ չեն, այլ հայագետներ՝ լայն իմաստով: Մասնավորապես

Վիեննայի Մխիթարյան միաբանությունը մեկ հարյուրամյակ հանդիսացել է այն կենտրոնը, որտեղ բարձր մակարդակով զարգացել է հայագիտությունը, որի մի բաղադրիչն էլ հայերենագիտությունն է: Եվրոպական միջավայրում գործելը Մխիթարյաններին հնարավորություն էր տալիս հարաբերվել եվրոպական մշակույթի և գիտության հետ, յուրացնել դրանք և կիրառել հայագիտական ուսումնասիրություններում: Աղայանը ընդունում է Հ. Գաթըրճյանի այն դիտարկումը, թե վենետիկցիները զբաղվեցին հայերենը լատինաբանություններից մաքրելու գործով, իսկ վիեննացիները վերականգնեցին դասական գրաբարը՝ հայերենը մաքրելով հունաբանություններից: Վիեննական դպրոցը, ըստ Էդ. Աղայանի ճշմարիտ դիտարկման, «անմահ փառք է նվաճել»՝ նաև հրատարակելով «Հանդէս ամսօրեայ», պարբերականը, որը շատ է նպաստել հայագիտության զարգացմանը, և այդ տեսակետից այն ամենաարժեքավոր պարբերականներից մեկն է:

Ամփոփելով խոսքը վիեննական դպրոցի լեզվաբանական գործունեության մասին՝ Էդ.Աղայանը եզրակացնում է, որ ընդհանուր լեզվաբանական հարցերում հետևում են Հումբոլդտին, որոշ դեպքերում՝ երիտքերականներին: Սկզբնական շրջանում նրանք, բացի ավելի ուշ հանդես եկածներից, հետևել են Լագարդին և Մյուլլերին, սակայն նրանց մի մասը հետագայում, վերանայելով իրենց տեսակետները, վերակողմնորոշվում են դեպի Հյուբշմանի տեսությունը: Վիեննացիները, առանց բացառության, հետևում էին ինդեվրոպաբանությանը, սակայն ներկայացնում էին տարբեր դպրոցներ հայերենի ծագման և ցեղակցության հարցում. մի մասը հակված էր հայերենը համարել իրանյան լեզու, իսկ մի մասն էլ ընդունում էր հայերենի առանձին ինդեվրոպական լեզու լինելու հյուբշմանական տեսությունը: Այս երկատվածությունը Աղայանը բացատրում է նրանով, որ «բոլորը չէ, որ քննության են առել այդ խնդիրը»:

Եզրակացություն: Էդ.Աղայանի «Հայ լեզվաբանության պատմություն» աշխատությունը հայ լեզվաբանական մտքի շուրջ 1500-ամյա ընթացքը նկարագրող և հանգամանորեն լուսաբանող աշխատություն է: Այստեղ պատշաճ կերպով ներկայացված են նաև Մխիթարյան միաբանության վենետիկյան և վիեննական դպրոցների ներկայացուցիչները: Քննվել են նրանց հայացքները ընդհանուրլեզվաբանության, ինդեվրոպաբանության, հայերենագիտության հետ առնչվող հարցերը, ցույց է տրվել նրանց մոտեցումները լեզուների ծագման, նախալեզվի, լեզուների ցեղակցության, հայերենի ձևավորման և զարգացման, դասական գրաբարի և աշխարհաբարի առանձնահատկու-

թյունների և հարակից բազմաթիվ այլ խնդիրների նկատմամբ: Գնահատվել է նրանց խաղացած դրական ու բացառիկ դերը հայ լեզվաբանության պատմության մեջ: Էդ. Աղայանն այդ ամենը իրականացնում է գիտական բարձր մակարդակով, լեզվաբանական տեսությունների համակողմանի իմացությամբ, լեզվաբանության նորագույն ձեռքբերումների տեսանկյունից և դրանց կիրառմամբ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղայան Էդ., «Հայ լեզվաբանության պատմություն», Երևան, 1958:
2. Ասոյան Թ., Վենետիկի Մխիթարյանները և աշխարհաբարի հարցերը, Երևան, 2001:
3. Գաթըրճյան Հ., Պատմութիւն տիեզերական, հտ. Ա, Վիեննա, 1849:

ARMENOLOGICAL ACTIVITIES OF THE MKHITARIANS ACCORDING TO EDUARD AGHAYAN

ASOYAN TATUL
PhD in Philology, Associate Professor
Dean of the Faculty of Philology,GSU
e-mail:asoyan.60@mail.ru

110 years have passed since the birth of the great armenologist and linguist Eduard Agayan, who made a huge contribution to the development of Armenian linguistics. His scientific activities and studies in various fields of linguistics marked a new stage in the development of Armenian linguistics. Ed. Aghayan always showed an original approach during the examination of linguistic phenomena, interpreting many phonetic, lexical, grammatical realities in a new way, presenting linguistic facts from a different point of view. The linguist also stood out for his organizational skills. Working as a vice-rector for research, dean of the faculty, head of the chair, head of the language institute named after Hr. Acharyan, he demonstrated obvious skills as an organizer of scientific works. Ed: Aghayan has educated and brought up many generations during his scientific and pedagogical activity, many have become candidates of science and doctors under his skillful guidance and counseling. In his work "The History of Armenian Linguistics", Ed. Aghayan paid a lot of attention to the linguistic activity of the Mkhitarians. He separately touched upon their linguistic heritage and assessed them as an achievement of Armenian studies.

Eduard Aghayan created enduring values that rightfully stand as milestones in the history of Armenian linguistics, maintaining their scholarly significance into the future.

Keywords: *Linguistics, Mkhitarian Congregation, Eduard Aghayan, Phonetics, Grammar, history of Armenian Linguistics.*

АРМЯНОВЕДЧЕСКАЯ ДЕЯТЕЛЬНОСТЬ МХИТАРИСТОВ В ОЦЕНКЕ ЭДУАРДА АГАЯНА

АСОЯН ТАТУЛ
Кандидат филологических наук, доцент
Декан филологического факультета ГГУ
электронная почта:asoyan.60@mail.ru

Завершилось 110-летие со дня рождения великого армянского языковеда Эдуарда Баграта Агаяна, внесшего огромный вклад в развитие армянского языкознания. Его научная деятельность и исследования в различных областях языкознания ознаменовали новый этап в развитии армянского языкознания. Эд. Агаян всегда проявлял оригинальный подход при рассмотрении языковых явлений, по-новому интерпретируя многие фонетические, лексические, грамматические реалии, представляя языковые факты с иной точки зрения. Лингвист выделялся и своими организаторскими способностями. Работая проректором по научной части, деканом факультета, заведующим кафедрой, директором Института языка имени Р. Ачаряна, он продемонстрировал, очевидные навыки организатора научных работ. За время своей научно-педагогической деятельности Эд. Агаян обучал и воспитал многие поколения, под его умелым руководством многие стали кандидатами и докторами наук. В своем труде «История армянского языкознания» Эд. Агаян много места уделил лингвистической деятельности Мхитаристов. Он отдельно коснулся их лингвистического наследия и оценил их как достижение арменоведения. Эд. Агаян создал такие ценности, которые по праву являются достижениями в истории армянского языкознания и никогда не потеряют своего научного значения в будущем.

Ключевые слова: *лингвистика, Конгрегация Мхитаристов, Эдвард Агаян, фонетика, грамматика, история армянского языкознания.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 17.08.2023թ.:
Հոդվածը գրախոսվել է 22.08. 2023թ.:
Ընդունվել է տպագրության 17.11.2023թ.: